ՍԵԴՐԱԿ ՄՈՒՐԱԴՅԱՆ
ԱՆՀԱՏԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ՔՆ ՊԵՏԱԿԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ 17217
Ք.ԵՐևԱՆ ՅԱՆ ՌԱՅՆԻՍԻ 5/28
Հեռ. 093 33 06 19 055 24 36 38
E-mail: hgmsn@mail.ru

*Հաստատում եմ՝*

*ՍԵԴՐԱԿ ՄՈՒՐԱԴՅԱՆ Անհատական ձեռնարկության*

*Տնօրեն՝ ____________ Ս. Մուրադյան*

<<25>> ____12____ 2023 թ.

*ԼԻՑԵՆԶԻԱ ՔՊԼ 17217*

# ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

## Ք.ԵՐԵՎԱՆ ՄԱԼԱԹԻԱ-ՍԵԲԱՍՏԻԱ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ/ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ " ԵՌԱԲԼՈՒՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՆԹԵՈՆ" ԿԱՄԱՐԱՆՑՈՒՄԻ ՏՐԱՎԵՐՏԻՆԵ ՀԱՏԱԿԻ ՎԵՐՋՆԱՄԱՍԻՑ ԴԵՊԻ ԿԱՆԳԱՌ ՏԱՆՈՂ ՃԱՆԱՊԱՐՀԻ ԱՋԱԿՈՂՄՅԱՆ ՄԱՍՈՒՄ ՄԱՅԹԻ ԵՎ ՀԵՆԱՊԱՏԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ նախագծի և նախահաշվի

Պատվիրատու՝ Երևանի քաղաքապետարան

Նախագծող՝ ,, ՌԻ ԳՌՈՒՊ,, ՍՊԸ

ՀՀ , Ք.Երևան Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի, "Եռաբլուր Զինվորական Պանթեոն" կամարանցումի տրավերտինե հատակի վերջնամասից դեպի կանգառ տանող ճանապարհի աջակողմյան մասում մայթի և հենապատի կառուցման աշխատանքների նախագծի և նախահաշվի փործաքննությունն իրականացվում է երևանի քաղաքապետարանի հետ կնքված թիվ ԵՔ – ԳՀԾՁԲ – 23/91 ծածկագրով պայմանագրի համաձայն:

Նախագծի և նախահաշվի համար որպես հիմք են հանդիսանում.

1. տեղանքի հատակագիծը
2. տեղազննման արդյունքները
3. տեխնիկական առաջադրանքը

**Նախագծի կազմը**

Փորձաքննության ներկայացված նախագիծը բաղկացած է.

-բացատրագիր, իրավիճակային հատակագիծ, որտեղ ներկայացված են աշխատանքների կատարման համառոտ նկարագրերը:

-Հենապատի և մայթի հատակագիծ, երկայնական և լայնական կտրվածքները, ամրանավորման հանգույցները, բարձրությունները տարբեր տեղամասերի համար:

-մայթի կտրվածքը:

Հենապատը կառուցվում է որպես միաձույլ երկաթբետոնյա սեղանաձև կոնստրուկցիա, որի ներքևի հատվածում նախատեսվում են հենասալեր երկու կողմերում: Հենապատի հետևի հատվածում նախատեսված են դրենաժ-խողովակներ: Բերված են ամրանավորման նախագծերն ու տարածական սխեման:

Բերված են նաև կատարվող աշխատանքների ծավալները, նյութածախսը,որոնք հաշվարկված են նախագծերին համապատասխան:

Համաշինարարական աշխատանքների նախագծում նախատեսված է իրականացնել ասֆալտաբետոնյա մայթեր 1,5մ լայնությամբ: Այն հատվածներում որտեղ կանկից բնահողի մեծ թեքություններ, իրականացվում են երկաթբետոնյա հենապատեր: Հենապատի եզրից մինչև մայթի եզր - 1,5մ : Մայթի ընդհանուր երկարությունը կազմում է 844 մ, որից 520մ – ը կից ունի հենապատ, իսկ 324 մ – ը առանց հենապատի: Հենապատերը նախատեսված է երեսապատել բազալտե սալիկներով, իսկ հենապատի վերևում տեղադրել բազալտե թասակ: Իրականացված է նաև ջրամեկուսացում և դրենաժային համակարգ: Մայթերի եզրաքարերը նախատեսված են բազալտից 15*30 սմ կտրվածքով, իսկ ասֆալտապատումը իրականացվում է մինչև 7 սմ հաստությամբ:

**Նախահաշիվը** կազմված է կառավարության 23 հունիսի 2011թ. թիվ 879-Ն որոշման համապատասխան,շին.աշխատանքների գործող գների հաշվարկների մեթոդական ցուցումների հիման վրա:

Նյութերի արժեքը հաշվարկվել է ՀՀ ՖՆ 09.2023 թ. ինֆորմացիոն տեղեկագրի հիման վրա: Աշխատավարձերի և մեքենաների շահագործման ծախսերը հաշվարկված են 1984 թ. նորմատիվային ծախսերի հիման վրա՝ կիրառելով համապատասխան հաշվարկային ինդեքսները և գործակիցները:

Համաշինարարական աշխատանքների համար հաշվարկվել են կատարվելիք աշխատանքների օբյեկտային լոկալ նախահաշիվները: Կազմվել է հավաք նախահաշիվ և ծավալաթերթ;

Կատարվելիք աշխատանքների արժեքները հետևյալն են.

-ըստ նախահաշվի 118 285 520 ՀՀ դրամ

-ըստ ծավալաթերթի 112 152 610 ՀՀ դրամ

**Փորձագիտական եզրակացություն**

Նախագիծն իրականացված է ՀՀ օրենսդրության և նորմատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին համապատասխան:

Նախահաշիվը կազմված է,,Գործող գներով շինաշխատանքների գնահատման կարգի,, համաձայն, ծավալները հաշվարկված են նախագծին համապատասխան:

Նախագիծն ու նախահաշիվը կարող են սահմանված կարգով պատվիրատուի կողմից ներկայացվել համաձայնեցման և հաստատվել:

Փորձագիտական եզրակացությունը կազմված է համաձայն Հայաստանի Հանրապետությունում քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության իրականացման կարգի, որը հաստատված է ՀՀ կառավարության 19 մարտի 2009թ. թիվ 596-Ն որոշմամբ :

Փորձագետ ճարտարագետ՝ Ս. Մուրադյան

ՀՀ Քաղաքաշինության կոմիտե ԼԻՑԵՆԶԻԱ ՔՊԼ- 17217